

Կեսարիա ուր իր մանկութիւնը կը բու-
լորէ Գրիգոր, այդ օրերուն ուսումնական
շարժման մասնակից ըլլալ կը թուի, մաս-
նաւորապէս շնորհիւ երկու կարկառուն
ղէմքերու որոնք այս միջոցին կը փայ-
լին հոն:

Այս երկու զէմքերն են Յովհաննէս
եպս. Հղուեցի և Աստուածատուր եպս.
Տարօնեցի կամ Մշեցի:

Այս երկու եկեղեցականները կը թուին
ուսովիրաները եղած ըլլալ Կեսարիոյ շըր-
ջանակին մէջ մտաւորական շարժման:

Յովհաննէս եպս. Հղուեցի, 1570-76ին,
այսինքն Գրիգորի մանկութեան օրերուն
Թոմարգայի Ս. Աստուածածին վանքին
առաջնորդն էր: Տրդատ եպս. Պալեան կը
կարծէ թէ անիկա 1552-1553ին իբր Կե-
սարիոյ առաջնորդ յիշատակուած Յովհան-
նէս Արքեպ.ին հետ միւսնոյն անձն է, սա-
կայն այս մասին որոշ փաստ մը չկայ:

Առաքէլ Դաւրիժեցի (էջ 11) Սրապիոն
Ուռհայեցիի աշակերտներուն կարգին կը
յիշատակէ «Յովհաննէս վրդ. ի Հզուոյ», որ
հաւանաբար այս եպիսկոպոսն է, որուն
օրով Թոմարգայի Ս. Աստուածածին վան-
քին մէջ մտաւորական շարժման մը ծաղ-
կումը կը տեսնուի, գլխաւոր դեկավարու-
թեամբ Աստուածատուր վրդ. Մշեցիի, որ